ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ

ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Կուսակցությունները յուրաքանչյուր տարի, հաշվետու տարվան հաջորդող մայիսի 31-ից ոչ ուշ, www.azdarar.am կայքում հրապարակում են հաշվետվություն ֆինանսական աղբյուրների ու ծախսերի, ինչպես նաև՝ գույքի մասին:
Այս բաժնում ամփոփված են 2020 թ. ընթացքում ֆինանսական մուտքերի և ելքերի վերաբերյալ հաշվետվությունները: 2021 թ. հաշվետվությունները հասանելի կլինեն մինչև 2022 թ. մայիսի 31-ը:

ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ոչ բոլոր կուսակցություններն են ներկայացրել տարեկան հաշվետվություններ



Ներկայացված հաշվետվություններում զգալի թիվ են կազմում **0-ական մուտքեր և ելքեր** ունեցող կուսակցությունները:



Կուսակցությունների ծախսերն՝ ըստ ներկայացված տարեկան հաշվետվությունների



Ֆինանսական միջոցների աղբյուրների և ծախսերի, ինչպես նաև գույքի վերաբերյալ տարեկան հաշվետվություն ներկայացրած (83) կուսակցություններից մոտ 20%-ի դեպքում տարեկան ծախսերը չեն գերազանցել 1 մլն դրամը:

2020 թ. առավելագույն ծախսեր են կատարել Հայաստանի Հանրապետական և «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունները:

2020 թ. դրությամբ առավելագույն ծախսեր կատարած կուսակցությունների **հնգյակը:**

Ֆինանսական մուտքերի և ելքերի տարբերությունը բոլոր կուսակցությունների մոտ բավականին ցածր է՝ բացառությամբ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության, որն, ըստ ներկայացված հաշվետվության, ունի զգալի մնացորդ:



ՆՎԻՐԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի տարբերություն այլ կուսակցությունների՝ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցությունը միակն է, որ 2020 թ. նվիրատվություն է ստացել իրավաբանական անձանցից, որոնցից առավել խոշորներն են (1-5 մլն դրամ) «Ալվինա հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ն, «Ապավեն» ՍՊԸ-ն, «Թի էս քոնսթրաքշն» ՓԲԸ-ն, «Հարավկովկասյան երկաթուղիներ» ՓԲԸ-ն, «Յունիքոմփ» ՓԲԸ-ն, «Սևանի շաքարի գործարան» ՓԲԸ-ն, «Վեգա Ուորլդ» ՍՊԸ-ն, «ՄԱՊ» ՓԲԸ-ն և այլն:

USAID ԱՄԵՐԻԿԱՅԻ ԺՈՂՈՎՐԴԻՑ

ԹՐԱՆՍՓԱՐԵՆՍԻ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ ՀԱԿԱԿՈՌՈՒԱՑԻՈՆ ԿԵՆՏՐՈՆ

Հրապարակումը հնարավոր է դարձել Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) միջնորդությամբ: Բովանդակության պատասխանատուն Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնն է, և պարտադիր չէ, որ այն արտացոլի ԱՄՆ ՄԶԳ-ի կամ Ամերիկայի Միացյալ Նահանգների կառավարության տեսակետները:

31.12.2021